ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

<< 18 >> հունիսի 2015 թվականի N 43

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Դեբետ համայնքի ավագանու 11-ը հունիսի 2015թ. թիվ 19-Ա, 20-Ա, 21-Ա և 22-Ա որոշումները:

Առդիր ՝ 4 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11 >> հունիսի 20 15 թվականի N 19 – Ա

### ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015թ. ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դեբետ համայնքի ավագանու 2015թ.-ի ապրիլի 08-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Դեբետ համայնքի վարչական տարածքի գյուղատնտեսական նշանակության հողերից համայնքային սեփականություն դարձնելու մասին:
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքով օտարելու մասին:

Կողմ /3/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Գուրամ Պետրոսյան
Աշոտ Ղազարյան
Արթուր Նազլուխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 15 թ. ________________ _____
գ. _____________

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 11 >> հունիսի 2015 թվականի N 20 – Ա

## ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0.1663 հա ՀՈՂԱԿՏՈՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով և ՀՀ <<Հողային օրենսգրքի >> 67-րդ հոդվածով

1. Դեբետ համայնքի վարչական տարածքի հողամասերից՝06-034-053-003 ծածկագրի տակ գտնվող բնակավայրային նշանակության հողատեսքից 0.16675հա հողակտորը դարձնել համայնքային սեփականություն:
2. Համայնքի ղեկավար Ա. Քոչարյանին՝ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանում, 06-034-053-003 ծածկագրի տակ գտնվող բնակավայրային նշանակության հողատեսքից 0.16675 հա հողակտորի նկատմամբ Դեբետ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Կողմ /3/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Գուրամ Պետրոսյան
Աշոտ Ղազարյան
Արթուր Նազլուխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 15 թ. ________________ ____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ու Մ

<< 11 >> հունիսի 20 15 թվականի N 21 – Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014թ. նոյեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Դեբետ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 33 - Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի0 մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ /3/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Գուրամ Պետրոսյան
Աշոտ Ղազարյան
Արթուր Նազլուխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 15 թ. ________________ ______

գ. ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11 >> հունիսի 20 15 թվականի N 22 – Ա

## ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Դեբետ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-034-053-003 ծածկագրով 0.16675 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը աճուրդ վաճառքով օտարելուն:

2. աճուրդով վաճառվող հողամասի մեկնարկային գին սահմանել 161000 ՀՀ դրամ, մասնակցության վճարը 5000 ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:

3.Համայնքի ղեկավար Ա. Քոչարյանին. Ապահովել աճուրդով վաճառվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ /3/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Գուրամ Պետրոսյան
Աշոտ Ղազարյան
Արթուր Նազլուխանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

20 15 թ. _______________ ____